

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018 ԹՎԱԿԱՆ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում
		ՏԸՀ	Ընտրական տեղամաս				
1	Հեռախոսազանգ	3	3/23	Ընտրողը ներկայացել է քվեարկության սենյակ, որպեսզի մասնակցի քվեարկությանը, երբ մտնեցել է տեխնիկական սարքավորմանը, պարզվել է, որ էլեկտրոնային ցուցակում տվյալ ընտրողի անունը չկա, սակայն թղթային տարբերակում կա: Ընտրողին թույլ չեն տվել քվեարկել, ասելով, որ Ոստիկանությունից պետք է ներկայացնի տեղեկանք	Համապատասխանում է իրականությանը	3/23 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Գևորգ Ավետիսյան	Փաստի հավաստիությունը ստուգվեց և ընտրողին թույլ տվեցին մասնակցել
2	https://armlur.am/841126/	5	5/10	Դիտորդը տեղեկացրել է, որ քվեախցիկի հետևում առկա է դուռ, որի վրա կա բանալի: Դիտորդը խնդրել է տեղափոխել քվեախցիկը և վերջինիս խնդրանքին ի պատասխան սկզբում հանձնաժողովի նախագահը հրաժարվել է տեղափոխել քվեախցիկը, այնուհետև, երբ դիտորդը պահանջել է արձանագրել գրանցամատյանում խախտման վերաբերյալ իր գնահատականը, վերջինս համաձայնվել է և քվեախցիկը տեղափոխվել է: Ավելի ուշ, Տարածքային ընտրական հանձնաժողովից այցելել են տեղամաս և պահանջել նույն տեղում դնել քվեախցիկը, իսկ ետևաժամում գտնվող դռան վրա փակցվել է թուղթ՝ դիտորդի ստորագրությամբ:	Համապատասխանում է իրականությանը	5/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Գալստյան և <<Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն>> Դիտորդ Արթուր Գովհաննիսյան	Խախտումը վերացվել է և քվեարկությունն ընթանում է ընտրական օրենսդրությամբ նախատեսված կանոնակարգումների համապատասխան
3	https://armlur.am/841126/	8	8/15	Խախտումների վերաբերյալ գնահատականի գրանցման մերժում Դիտորդը հայտնում է, որ տեղամասի բացումից հետո մոտ 30 հատ ծրարի վրա հանձնաժողովի անդամի կողմից դրվել է կնիք: Այս պահին կնիք արդեն չեն դնում	Մասամբ է համապատասխանում իրականությանը	8/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ալվարո Խաչատրյան և <<asparez.am>> կայքի լրագրող Մերի Գունանյան	Ներկայացված փաստը ստուգվել է և պարզվել, որ որևէ դիտորդի՝ գրանցամատյանում գնահատականը գրառելու պահանջի մասով, չի մերժվել, ավելին խախտումը նկատել է <<asparez.am>> կայքի լրագրողը՝ ծրարների կնքման հետ կապված, որը հանձնաժողովի նախագահի ասելով, եղել է թյուրիմացություն, որը լրագրողի հայտնելով 09:00-ի դրությամբ արդեն կանխված է եղել:

4	https://armlur.am/841126/	8	8/15	Խախտումների վերաբերյալ գնահատականի գրանցման մերժում Դիտորդը հայտնում է, որ տեղամասի բացումից հետո մոտ 30 հատ ծրարի վրա հանձնաժողովի անդամի կողմից դրվել է կնիք: Այս պահին կնիք արդեն չեն դնում	Մասամբ է համապատասխանում իրականությանը	8/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ալվարո Խաչատրյան և <<asparez.am>> կայքի լրագրող Մերի Յունանյան	Ներկայացված փաստը ստուգվել է և պարզվել, որ որևէ դիտորդի՝ գրանցամատյանում գնահատականը գրառելու պահանջի մասով, չի մերժվել, ավելին խախտումը նկատել է <<asparez.am>> կայքի լրագրողը՝ ծրարների կնքման հետ կապված, որը հանձնաժողովի նախագահի ասելով, եղել է թյուրիմացություն, որը լրագրողի հայտնելով 09:00-ի դրությամբ արդեն կանխված է եղել:
5	https://www.tert.am/am/news/2018/09/23/Elections/2799104	4	4/20	«Ազատություն» ռ/կ-ի լրագրողին ներկայացրեց, որ իրենց առաքելության դիտորդն ահազանգել է, որ այս տեղամասում երկու խնդիր կա. հանձնաժողովի նախագահը «Լուսավոր Հայաստանի» մեծ կրծքանշան է կրել, ինչը դիտարկվում է որպես քարոզչություն և վարչական իրավախախտում է, դիտորդը նաև ահազանգել է, որ հանձնաժողովի նախագահը խոչընդոտում է դիտորդի գործունեությանը:	Մասամբ է համապատասխանում իրականությանը	4/20 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Կարինե Ղուկասյան, դիտորդ Սվետլանա Սարգսյան "Չեխինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ" ԶԿ	Առավոտյան նախագահը կրել է ոկլսակցություններից մեկի կրծքանշանը, սակայն նկատելուն պես այն հանել է: Դիտորդների իրավունքների խոչընդոտման առչվող հարցով նախագահը տեղեկացրեց, որ 2 դիտորդ մոտ էին կանգնած քվեախցիկներին, ինչոր է մի փոքր հեռվանալ, ինչին երկու դիտորդներն էլ անմիջապես արձագանքել են: Նախագահը վերոգրյալի վերաբերյալ կատարել է գրառում: Դիտորդը հաստատեց այս տեղեկատվությունը և ավելացրեց, որ ևս մեկ դեպք է եղել, երբ իրեն խնդրել են մի փոքր կողք կանգնել, ինչին ի պատասխան դիտորդը կշել է, որ իրավունք ունի ցանկացած վայրում կանգնել: Հանձնաժողովը չի խոչընդոտել: Ի պատասխան դիտորդին ուղղված հարցին, արդյո՞ք պահանջ է ներկայացվել դիտորդի գնահատականն արձանագրելու մասին, դիտորդը պատասխանեց "ոչ":
6	http://araratnews.am/lezvakriv%D5%9D-nubarasheni-1051-ehnrateghamasum-tesanyuth/	10	10/52	հանձնաժողովի որոշ անդամներ են սխալներ թույլ տալիս, որը epress.am-ի դիտորդները համարեցին օրենքի խախտում: Սկսվեց լեզվակռիվ դիտորդի եւ նախագահի միջեւ:	Մասամբ է համապատասխանում իրականությանը	10/52 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Զրիստինե Գևորգյան	Հեռախոսազանգով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից տեղեկացանք, որ որևէ սխալ տեղի չի ունեցել, ցուցակի մոտ նստած հանձնաժողովի անդամը թյուրիմացաբար անհատական կնիքով չի կնքել քվեարկության կտրոնը, սակայն ինքնատնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի մոտ նստած հանձնաժողովի անդամը դա նկատել է և միևնույն դրոշմանիշ փակցնելը տեղամասային հանձնաժողովի նախագահի գիտությամբ հետ է ուղարկել ցուցակի մոտ նստած հանձնաժողովի անդամի մոտ, կնքվել է, որից հետո ընտրողն ավարտել է իր քվեարկությունը

7	https://transparency.am/elections-monitoring/map/	9	9/6	0-ական տեղեկանքը գրանցամատյանում փակցնելու պահանջի խախտում	Համապատասխանում է իրականությանը	9/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Նահապետ Թամրազյան, քարտուղար	Հեռախոսազանգով տեղեկացանք, որ տեխնիկական սարքավորումը սահմանված ժամկետում տպել է տեղամասում ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը, սակայն գրանցամատյանում սոսնձվել է 08:10 թոպեին: Քվեարկության կարգի որևէ խախտում առկա չէ, քանի որ ընտրական օրենսդրությամբ սահմանված չէ գրանցամատյանում բացակայությունը հավաստող տեղեկանքի՝ գրանցամատյանում սոսնձելու հստակ ժամ:
8	http://www.panarmenian.net/arm/news/260370/	8	8/39	Դիտորդը ժամը 09:48-ին հայտնել է, որ ժամը 08:00-ին 8/39 Շենգավիթ տեղամասից մոտ 70 մ հեռավորության վրա կայանված է առանց պետհամարանիշների ավտոմեքենա, որի կողքը կան տղամարդիկ: Նկատել են դեպքեր, երբ ընտրողները դուրս են եկել տեղամասից և մոտեցել են այդ ավտոմեքենային:	Համապատասխանում է իրականությանը	8/39 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Գոհար Աբաջյան	Դիտորդը տեղեկացրել է Նախագահին, պազվել է, որ մեքենան բնակրի մեքենա է, Նախագահը տեղյակ է պահել ոստիկանությանը:
9	https://transparency.am/elections-monitoring/map/	2	2/16	Տեղամասի ընտրողների կամ կուսակցությունների ցուցակների բացակայություն, Շենգավիթ անմատչելիություն, քվեարկության սենյակի կահավորման հետ կապված խնդիրներ, վիճակահանության կարգի խախտում	չի համապատասխանում իրականությանը	2/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Անահիտ Հովի աննիսյան և ԹԻՀԿ դիտորդ Լիլիթ Գրիգորյան	ամբողջությամբ հերքել են ներկայացված տեղեկությունները
10	http://haynews.am/hy/1537692966	2	2/46	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող 2/46 ընտրատեղամասն այնպես է կահավորված, որ քվեախցիկի անմիջապես վերևում տեսանելի է առաստաղին ամրացված տեսախցիկը- այս մասին գրում է hetq.am-ը:	Համապատասխանում է իրականությանը	2/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Աննա Հարությունյան	Հեռախոսազանգով տեղեկացանք, որ քվեարկության սենյակը տեղակայված է դպրոցում, որտեղ կան տեսախցիկներ: Դպրոցի տնօրինությունը անջատել է տեսախցիկները, որը ստուգվել է, բացի այդ նորից թողնել փակվել է տեսախցիկը:
11	https://www.shantnews.am/news/view/158258.html	1	1/16	Տեղամասում արձանագրվել է դեպք, երբ ցուցակում անձի անվան դիմաց արդեն ստորագրված է եղել:	Համապատասխանում է իրականությանը	1/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Անուշ Մելիքյան	Հեռախոսազանգով տեղեկացանք, որ ընտանիքի մի անդամը ստորագրել է մյուսի փոխարեն, եղել է թյուրիմացություն, որը ուղղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ընտրողը իրականացրել է իր քվեարկությունը:

12	http://hetq.am/arm/news/93250/cucakneri-antchshtutyun-davtasheni-5-08-vntratexamasum.html#.W6dWyboPGP0.facebook	5	5/08	<p>Ծանոթանալով տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրված փաստին՝ տեղեկացանք, որ առավոտյան 8:44-ին երեք քաղաքացիներ սարքավորումներից իրենց 876, 879, 878 համարի կտրոնները վերցնելուց հետո մոտեցել են ցուցակներին և պարզվել է, որ ցուցակ 2-ում 871 համարին հաջորդում է միանգամից 881 համարը, այսինքն՝ բացակայում են թվով 10 ընտրողների տվյալներ:</p>	<p>իրականությանը համապատասխանում է</p>	<p>5/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Աշոտ Խաչատրյանի հետ</p>	<p>Որպես օպերատիվ լուծում պահանջող հարց ներկայացվել է ԿԸՀ, տրվել է լուծում:</p>
13	https://www.shantnews.am/news/view/158231.html	1	1/3, 1/4	<p>«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի դիտորդները ահազանգում են, որ Ավան վարչական շրջանի 1/3 և 1/4 ընտրատեղամասերում ընտրողները դուրս են գալիս քվեախցիկներից և բոլորի ներկայությամբ քվեաթերթիկները դնում ծրարի մեջ:</p>	<p>Համապատասխանում է իրականությանը</p>	<p>1/3 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ալբերտ Ավագյան և 1/4 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Աստղիկ Ավետիքյան</p>	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներից հեռախոսազանգով տեղեկացանք, որ եղել են տարեց մարդիկ, ովքեր քվեախցիկից դուրս են եկել ու փորձել քվեաթերթիկը տեղադրել ծրարի մեջ ուղղակի քվեարկության կարգի չիմացության պատճառով՝ չնայած նրան, որ հանձնաժողովի անդամները քվեաթերթիկ և ծրար տրամադրելիս մանրամասնորեն բացատրում են քվեարկության կարգը, այնուամենայնիվ, այդ տարեց ընտրողներին բացատրել են կարգը, որից հետո վերջիններս հետ են գնացել քվեախցիկ, տեղադրել քվեաթերթիկը ծրարի մեջ և մոտեցել ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող ու քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին: Քվեարկության գաղտնիության խախտման որևէ դեպք չի եղել:</p>

14	https://iravunk.com/news/67304	9	9/6	<p>Ընտրողները դուրս են գալիս քվեախցիկներից և բոլորի ներկայությամբ քվեաթերթիկները դնում ծրարի մեջ: Միաժամանակ, տեղամասում պարբերաբար կուտակումներ են ձևավորվում խմբերով գալու արդյունքում: Դիտորդը փորձել է լուսանկարել գրանցամատյանը, որտեղ արձանագրվել են վերոնշյալ խախտումները, սակայն հանձնաժողովի քարտուղարը դիտորդին արգելել է լուսանկարել գրանցամատյանը:</p>	իրականությանը համապատասխանում է մասամբ	9/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Նահապետ Թամրազյան, ԹԻՅԿ դիտորդ Արսեն Գյուրջյան	<p>ԹԻՅԿ դիտորդ Արսեն Գյուրջյանի պնդմամբ, 1-2 դեպք է եղել, երբ տարեց մարդիկ քվեախցիկից դուրս են փորձել քվեաթերթիկը տեղադրել ծրարի մեջ՝ ասելով, որ դժվարանում են դա անել: Դիտորդը միաժամանակ նշեք, որ հանձնաժողովի անդամները քվեաթերթիկ և ծրար տրամադրելիս մակրամասորեն բացատրում են քվեարկության կարգը: Գրանցամատյանը լուսանկարելու դիտորդի պահանջի վերաբերյալ էլ դիտորդ Արսեն Գյուրջյանը նշեց, որ քարտուղարի գնահատմամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը չի կարող լուսանկարվել, սակայն դիտորդը նշել է, որ դա իր իրավունքն է և տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը թույլ է տվել</p>
15	https://www.aravot.am/2018/09/23/982674/	1	1/16	1/16 Տեղամասում արձանագրվել է դեպք, երբ ցուցակում անձի անվան դիմաց արդեն ստորագրված է եղել:	Համապատասխանում է իրականությանը	1/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Անուշ Մելիքյան	օրենսդրությամբ սահմանված կարգով հնարավորություն է տրվել ընտրողին ստորագրելու իր անվան դիմաց "Լրացուցիչ նշումներ" սյունակում:
16	Հեռախոսագրանց	9	9/55	Վստահված անձը տեսել է, որ ընտրողը քվեաթերթիկը նկարել է, դիմել է հանձնաժողովի Նախագահին, որպեսզի գրանցամատյանում կատարի գրառում, սակայն վերջինս հրաժարվել է դեպքն արձանագրել:	Համապատասխանում է իրականությանը	9/55 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Արարատ Մովսիսյան, <<Իմ քայլը>> կուսակցությունն էրի դաշինքի վստահված անձ	Որպես օպերատիվ լուծում պահանջող հարց ներկայացվել է ԿԸՅ, տրվել է լուծում:
17	https://www.aravot.am/2018/09/23/982674/	1	1/19	Ընտրողը ցուցակում ստորագրել է այլ անձի անվան դիմաց, հանձնաժողովի անդամը որոշել է, որ ում անվան դիմաց ստորագրվել է, ևս էլ կստորագրի շփոթված քաղաքացու փոխարեն: Այդ մասին արձանագրություն է կազմվել:	Համապատասխանում է իրականությանը	1/19 տեղամասային ընտրական հանձնաժողովի Նախագահ Հակոբ Սահակյան	հանձնաժողովը շտկել է իրավիճակը, երբ ընտրողը սխալմամբ ստորագրել է այլ ընտրողի տողում:

18	https://socialmedia.am/16069.html	7	7/46	<p>ընտրացուցակներում տեղ են գտել մարդիկ, որոնք իրենց շենքում չեն բնակվում. «Լավ, ստեղ հանձնաժողովի նախագահ, քարտուղար չկա՝ 25 անգամ ստեղ ընտրությունն ա եղել, միշտ եկել ասել եմ, հիմա ո՞ւմ ասել: 30 տարի ա, ես էդ շենքում եմ ապրում, 40 հոգի կան, որ ընտրացուցակի մեջ են, շենքում չեն»: Դիտարկմանը, որ իրենք գրանցված են, դրա համար կան ընտրացուցակում՝ քաղաքացին չհամաձայնեց. «Ո՞վ ա ասում, հիմա ես ձեզ ապացուցե՞մ, որ մարդիկ գրանցված չեն:</p>	չի համապատասխանում իրականությանը	ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն	
19	https://armlur.am/841213/	9	9/6	<p>Ընտրողներին օգնելու կարգի խախտում տեղի է ունեցել ընտրողներին օգնելու կարգի խախտում. տատիկն իր թոռան հետ առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում կատարելու քվեախցիկում կատարել են ընտրություն: Խնդրին արձագանքել է նաև “Իմ քայլը” դաշինքի վստահված անձը, որի արդյունքում “Բարգավաճ Հայաստան” կուսակցության վստաված անձի և “Իմ քայլը” դաշինքի վստաված անձի միջև վիճաբանություն է տեղի ունեցել: Միայն քվեախցիկից դուրս գալուց հետո համապատասխան գրառում է կատարվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, իսկ “Բարգավաճ Հայաստան” կուսակցության վստաված անձը շարունակել է ուղորդել ընտրողներին՝ ցուցումներ տալով նրանց:</p>	Համապատասխանում է իրականությանը	9/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նահապետ Թամրազյան	Թռռնիկը տատիկի հետ եկել է քվեարկելու որպես օգնող, ում տվյալները գրանցամատյանում գրանցվել է, երբ ծրարը գցել են քվեատուփի մեջ: Ընտրական օրենսդրությամբ նախատեսված օգնողի ինստիտուտին վերաբերող կանոնակարգումների որևէ խախտում առկա չէ, քանի որ գնողի տվյալները գրանցամատյանում գրանցվել են:

20	http://hetq.am/arm/news/93257/2-08-yntratexamasin-harox-bakum-vax-aravotic-gaxagacineri-khumb-e-havaqvats.html#.W6dvPDnur0w.facebook	2	2/08	<p>Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 4-րդ զանգվածում տեղակայված 2/08 ընտրատեղամասին հարող բակում վաղ առավոտից քաղաքացիներ են խմբով կանգնած:</p>	<p>չի համապատասխանում իրականությանը</p>	<p>2/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արման Սիմոնյան</p>	<p>Թիվ 2/8 ՏԸՀ նախագահի հավաստմամբ որպես կուտակում է գնահատվել 3-4 երիտասարդների ներկայությունը ընտրական տեղամասի տարածքից դուրս գտնվող բնակելի շենքի բակերից մեկում: Չնայած վերջինիս որակմամբ նշվածը կուտակում չէր, այնուամենայնիվ, հրավիրվել է ոստիկանության աշխատակից:</p>
21	https://transparency.am/elections-monitoring/map/	6	6/8	<p>Դիտորդը նկատել է, որ ընտրողները քվեարկության սենյակում առկա խառնաշփոթի ժամանակ 2-3 հոգով են մոտեցել քվեախցիկներին: Հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի մեկ այլ անդամ զգուշացրել են ընտրողներին: Դիտորդը հանձնաժողովի քարտուղարին պահանջ է ներկայացրել խախտումը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, սակայն պահանջը մերժվել է հանձնաժողովի քարտուղարի կողմից այն պատճառաբանությամբ, որ վերջինս գտնում է, որ տվյալ դեպքում խախտում առկա չէ: Ավելի ուշ, դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին և վերջինս համաձայնվել է գրանցել խախտման փաստը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:</p>	<p>Համապատասխանում է իրականությանը մասամբ</p>	<p>6/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նիկոլայ Մնացականյան</p>	<p>Թիվ 6/8 ՏԸՀ նախագահի հավաստմամբ դիտորդի կողմից գրառում կատարելու պահանջ ներկայացնելու ժամանակ քարտուղարը ոչ թե մերժել է, այլ ներկա չի եղել: Նախագահը զգուշացրել է, որ քարտուղարի վերադառնալուն պես գրառումը կարձանագրվի գնարցամատյանում, ինչն էլ արվել է:</p>
22	https://www.shantnews.am/news/view/158495.html	6	6/33	<p>«Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդներն արձանագրել են, որ 6/33 տեղամասում քվեախցիկը սխալ է կահավորված:</p>	<p>Համապատասխանում է իրականությանը</p>	<p>6/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Անահիտ Իսոյան</p>	<p>Տեղեկացվել է տարածքային ընտրական հանձնաժողովին, հարցին տրվել է լուծում:</p>
23	https://transparency.am/elections-monitoring/map/	2	2/51	<p>Ըստ դիտորդի՝ երկու անձ քվեարկել են միաժամանակ նույն քվեախցիկում: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին և պահանջել, որպեսզի խախտումը գրանցվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:</p>	<p>Չի համապատասխանում իրականությանը</p>	<p>2/51 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Կարինե Մելունյան</p>	

24	http://haynews.am/hy/1537710847	3	3/24	Հաղորդվում է, որ Զանաքեռ-Չեյթուն 3/24 տեղամաս ընտրողներից մեկը ներկայացել է «դուխով» շապիկով: Հանձնաժողովի նախագահը զգուշացրել է վերջինիս, և ընտրողն ընտրելուց հետո հեռացել է տեղամասային կենտրոնից:	Համապատասխանում է իրականությանը	3/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արթուր Գևորգյան	Նախագահի հավաստմամբ, տեղեկատվությունը ճիշտ է, դիտորդները գնահատել է երևույթը որպես խախտում, նախագահն այն արձանագրել է գրանցամատյանում:
25	http://haynews.am/hy/1537710847	6	6/8	Աջափնյակի 6/8 տեղամաս ընտրողներից մեկը ներկայացել է «դուխով» գլխարկով: Հանձնաժողովի անդամները զգուշացրել են վերջինիս, և ընտրողն ընտրելուց հետո հեռացել է տեղամասային կենտրոնից:	Համապատասխանում է իրականությանը	6/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նիկոլայ Մնացականյան	Ներկա գտնվող դիտորդներն ու հանձնաժողովի անդամները զգուշացրել են, որ դա կարող է գնահատվել որպես քարոզչություն: Ընտրողը հանել է գլխակը և մասնակցել քվեարկությանը:
26	https://news.am/arm/news/472537.html	2	2/11	Երեւանի ավագանու ընտրություններում 2/11 ընտրատեղամասում կանխվել է կրկնակի քվեարկության դեպք «Իմ քայլը» դաշինքի օգտին: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԱԺ «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Շաքե Իսայանը:	Համապատասխանում է իրականությանը	2/11 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Էմմա Գասպարյան	Թիվ 2/11 տեղամասային հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, որ ընտրողը ներկայացել է անձը հաստատող փաստաթղթին փոխարինող ժամանակավոր վկայականով, որը ստացել էր ոստիկանությունից: Սակայն ոստիկանության անձնագրային ծառայությունում տվյալ ընտրողի փաստաթղթի տվյալների փոխարեն սխալմամբ լրացված է եղել այլ ընտրողի փաստաթղթի տվյալներ: Հրավիրվել է ոստիկանություն:
27	https://www.1in.am/2430719.html	3	3/24	Քվեարկության ժամանակ քվեախցիկին մոտեցել է տեսողության հետ խնդիրներ ունեցող ընտրողի դուստրը՝ առանց գրանցամատյանում որպես օգնող գրանցվելու:	Չի համապատասխանում իրականությանը	3/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արթուր Գևորգյան	

28	http://hetq.am/arm/news/93279/tiv-8-5-yntratexamasum-handznazhoxovi-hhk-akan-nakhagahy-hrazharvel-e-ardzanagrel-khakhtumneri.html	8	8/5	<p>Շենգավիթ վարչական շրջանում գտնվող թիվ 8/5 ընտրատեղամասում հանձնաժողովի 334-ական նախագահ Կարինե Դադայանը հրաժարվել է արձանագրել ընտրատեղամասում «Իմ քայլը» դաշինքի վստահված անձանց նկատած խախտումները: Այս մասին «Հետք»-ին ասեցին հանձնաժողովի 8/5 ընտրական տարածքում «Իմ քայլը» դաշինքի վստահված անձը նկատել է, որ ընտրական սեկյակի տարածքից դուրս կուտակումներ են և տպավորություն ստացել, որ ընտրության եկած քաղաքացիներին ուղղորդում են, որից հետո դուրս է եկել ընտրական սեկյակից, որպեսզի հասկանա, թե այնտեղ ինչ է կատարվում:</p>	<p>իրականությանը համապատասխանում է</p>	<p>8/5 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Կարինե Դադայանը</p>	<p>"Իմ քայլը" դաշինքի վստահված անձ Սևակ Մարտիրոսյանը տեղեկացրեք, որ եղել են կուտակումներ, հանձնաժողովի նախագահը չի կարողացել լուծումներ գտնել, ինչպես լուծում է տրվել ոստիկանության միջամտությամբ:</p>
29	http://hetq.am/arm/news/93273/akanates-i-ditordneri-ardzanagrats-khndirneri-yntrakan-gortsyntaci-veraberyal.html	7	7/10	<p>Դիտորդների՝ տեղամաս մուտք գործելու հետ կապված որևէ խնդիր չի արձանագրվել՝ մեկ բացառությամբ: Բացահայտվել է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում 7/10 և 7/11 տեղամասերի համար տեղադրված է սխալ հասցե՝ 84-րդ մանկապարտեզի հասցեն 30վնաթանի 23-ի փոխարեն ներկայացված է Շերամի 15, ինչի պատճառով դիտորդները երկու ժամ շարունակ չեն կարողացել գտնել տեղամասը:</p>	<p>Չի համապատասխանում իրականությանը</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>84-րդ մանկապարտեզի հասցեն Շերամի 15-ն է, որն էլ մատնանշված է ԿԸՀ կայքում:</p>
30	http://haynews.am/hy/1537715848	6	6/13	<p>6/13 ընտրատեղամասում քաղաքացին պարզեց, որ գրանցամատյանում իր անվան դիմաց արդեն ստորագրություն կա: Ընտրական հանձնաժողովի անդամները և նախագահ Վարվառա Ստեփանյանը պարզաբանեցին, որ, հավանաբար, մեկ այլ ընտրող ստորագրության համար նախատեսված տողերը շփոթել է և ուրիշ քաղաքացու անվան տակ է ստորագրել:</p>	<p>Համապատասխանում է իրականությանը</p>	<p>6/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Վարվառա Ստեփանյան</p>	<p>Օրենսդրությամբ սահմանված կարգով հնարավորություն է տրվել ընտրողին ստորագրելու իր անվան դիմաց "Լրացուցիչ նշումներ" սյունակում:</p>

31	http://hetq.am/arm/news/93288/ankakh-ditor-dashingi-grancats-khakhtumery-1900-i-drutyamb.html#.W6exuYi2AIE.facebook	6	6/51	<p>Աջափնյակ վարչական շրջանի 6/51 ընտրատեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձը կանգնած է եղել քվեախցիկներին շատ մոտ տարածության վրա, որտեղից տեսանելի էր քվեարկման գործընթացը: Դիտորդական խմբի պահանջով տարածքում սեղաններից կառուցվել է «պատվար», վստահված անձինք, դիտորդները և հանձնաժողովի անդամները հեռացվել են պատշաճ հեռավորության վրա: Դեպքն արձանագրվել է գրանցամատյանում: Նույն ընտրատեղամասում ավելի ուշ ԲՀԿ վստահված անձը քաշքշուկ է սկսել «Իմ քայլը» դաշինքի վստահված անձի հետ: Հանձնաժողովի անդամները որևէ կերպ չեն արձագանքել կատարվածին: Դիտորդական խումբը ոստիկանություն է կանչել, որից հետո ԲՀԿ վստահված անձը հեռացվել է</p>	Համապատասխանում է իրականությանը մասամբ	6/51 տեղամասային հանձնաժողովի նախագահ Էդմոն Կարապետյան, "Իմ քայլը" դաշինքի վստահված անձ Գառնիկ Աթանեսյան	<p>Տեղի է ունեցել որոշակի խոսակցություն "Բարգավաճ Հայաստան" կուսակցության և "Իմ քայլը" դաշինքի վստահված անձանց միջև, սակայն բոլոր տարածայնությունները հարթվել են, վստահված անձ Գ. Աթանեսյանի պնդմամբ որևէ սուբյեկտի իրավունք չի խախտվել կամ չի սահմանափակվել: Վստահված անձի կողմից գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ չի ներկայացվել:</p>
32	https://www.aravot.am/2018/09/23/982778/	9	9/28	<p>Երեւանի Կոնդ թաղամասում գտնվող 9\28 տեղամասում, հինգ հոգի մասնակցել են ընտրության, բայց ցուցակում նրանք չկան:</p>	չի համապատասխանում իրականությանը	9/28 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ռուզաննա Աբրահամյան	
33	http://hetq.am/arm/news/93288/ankakh-ditor-dashingi-grancats-khakhtumery-1900-i-drutyamb.html#.W6exuYi2AIE.facebook	7	7/38	<p>Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 7/38 ընտրատեղամասում գրանցվել է քվեարկության ծրարն առանց դրոշմանիշի քվեատուփի մեջ գցելու դեպք: Հանձնաժողովի նախագահը որոշել է նոր քվեաթերթիկ տրամադրել ընտրողին:</p>	Համապատասխանում է իրականությանը	7/38 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Վաղարշակ Եղիազարյան	<p>Որևէ խախտում առկա չէ, ընտրողը առանց ծրարը սեղանի վրա դնելու գցել է քվեատուփի մեջ, որի մասին զգուշացվել է հանձնաժողովի նախագահին, այնուհետև կատարվել է համապատասխան գրառում գրանցամատյանում, որից հետո ընտրողին տրամադրվել է նոր քվեաթերթիկ և թույլ է տրվել ընտրողին իրականացնելու իր քվեարկությունը:</p>

34	http://hetq.am/arm/news/93288/ankakh-ditord-dashingi-grancats-khakhtumery-1900-i-drutyamb.html#.W6exuYi2AIE.facebook	8	8/29	<p>Շենգավիթ վարչական շրջանի 8/29 ընտրատեղամասում ևս լարված մթնոլորտ է առաջացել: Զանձնաժողովի նախագահը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել դիտորդի հասցեին, ապա ոստիկանության աշխատակցին հրահանգել բացատրություն վերցնել դիտորդից՝ իբր վերջինս կեղծ ահազանգ է տվել: Ոստիկանության աշխատակիցը հանձնաժողովի նախագահի հրահանգով փորձել է բացատրություն վերցնել, սակայն դիտորդը հրաժարվել է: Զանձնաժողովի նախագահին այնպիսի սպառնալիքի մթնոլորտ է ստեղծել, որ դիտորդը նույնիսկ չի կարողանում խախտումների մասին գրառումներ կատարել գրանցամատյանում:</p>	չի համապատասխանում իրականությանը	Զանձնաժողովի նախագահ Էդիտա Միրիջանյան	
35	http://hetq.am/arm/news/93288/ankakh-ditord-dashingi-grancats-khakhtumery-1900-i-drutyamb.html#.W6exuYi2AIE.facebook	8	8/5	<p>Շենգավիթ վարչական շրջանի 8/5 ընտրատեղամասում տարածքային հանձնաժողովի նախագահը փորձել է խոչընդոտել 1in.am կայքի լրագրող Դիանա Դավթյանի աշխատանքը, երբ վերջինս, հարցազրույց վերցնելով հանձնաժողովի քարտուղարից, փորձել է գրուցել ևսև «Իմ քայլը» դաշինքի վստահված անձի հետ:</p>	Համապատասխանում է իրականությանը մասամբ	"Իմ քայլը" դաշինքի վստահված անձ Մարտիրոսյան	<p>ընտրողների հոսքը "Իմ քայլը" դաշինքի վստահված անձ Նշեց, որ անհայտ անձը քաշել է լրագրող Դիանա Դավթյանի ձեռքը, հանձնաժողովը ցուցաբերել է անտարբերություն: Վստահված անձանց միջամտությամբ իրավիճակը հարթվել է: Այս պահին մթնոլորտն աշխատանքային է, ընթանում է ամփոփման նիստը:</p>